

---

---

**ԴԻԱՍՄԻԿ ՍՏՈՒՍԱՍՏԻԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ  
ՄՈՂԵԼԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՒՍՆՑՈՒՄԱՑԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ**

ԲԱՐՍԵՂՅԱՆ Գ. Վ.

ՀՀ տնտեսության համար կառուցվել է դրամավարկային քաղաքականության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդել<sup>1</sup>՝ ենթադրելով, որ մրցակցությունը աշխատանքի շուկայում մենաշնորհային է, իսկ աշխատավարձերը կոշտ են: Նման ենթադրությունների օբյեկտիվ պատճառն այն է, որ փաստացի տնտեսություններում աշխատանքային ծառայությունները տարբերակված են (մարդիկ միմյանցից տարբերվում են իրենց մասնագիտական կարողություններով), իսկ փոփոխվող տնտեսական տեղե- կատվությանը համապատասխան՝ աշխատանքային պայմանագրերը ժամանակի յուրաքանչյուր պահի չեն ճշգրտվում: Ուսումնասիրենք թվարկված ենթադրություններով կառուցված դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելի հատկությունները՝ քըն- նարկելով մոդելի դինամիկ վարքը տարբեր շոկերին արձագանքելու տեսանկյունից:

Բացի այդ, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում դրամավարկային քաղաքականության փոխանցման ուղու վրա աշխատավարձերի կոշտության ունեցած ազդեցության ուսումնասիրությունը: Դրա վերաբերյալ համապատասխան դատողություններ կատարելու նպատակով միննույն շոկի ունեցած ազդեցությունը մոդելի փոփոխականների վրա դիտարկվում է մի դեպքում, երբ աշխատավարձերը ճկուն են, մյուս դեպքում, երբ դրանք կոշտ են:

Այսպիսով, նախ ներկայացվում են պարամետրերի այն արժեքները, որոնց դեպքում լուծվում է մոդելը, այնուհետև տարաբնույթ տնտեսական շոկերի պարագայում՝ մոդելի դինամիկ վարքը: Վերջում համադրելով հավասարակշռության վերականգնման գործընթացում փոփոխականների ստանդարտ շեղումները՝ եզրակացվում է, որ կոշտ աշխատավարձերի պարագայում մոդելի անցումային դինամիկան էապես փոխվում է:

Նշենք, որ շոկերի ազդեցությունները մեկնաբանելիս փակագծերում նշվում են (?) - ի այն հավասարումների համարները, որոնք բացատրում են որոշակի փոփոխականի վարքագիծը:

**1. Մոդելի փոփոխականների արձագանքը տարբեր բնույթի շոկերին:** Կառուցված մոդելն ուսումնասիրելու և տարբեր շոկերի ազդեցությունը մոդելի փոփոխականների վրա դիտարկելու համար անհայտ պարամետրերին տրվել են հետևյալ արժեքները.

---

<sup>1</sup> **Բարսեղյան Գ.**, Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը՝ կոշտ աշխատավարձերով (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, N 3, էջ 127-139):

$h=0.5$	$\beta_s=0.25$	$\gamma_w=0.25$	$k_3=0.15$	$a=0.73$	$\rho_a=0.84$
$\beta_h=0.65$	$\beta=0.99$	$\sigma=1.86$	$\varphi=1.3$	$\rho_{\pi^*}=0.75$	$\rho_{\xi}=0.75$
$\beta_m=0.45$	$w_h=0.65$	$k_1=0.575$	$a^*=0.73$	$\rho_{y^*}=0.75$	$\rho_{gov}=0.63$
$\beta_i=0.4$	$w_m=0.8$	$k_2=0.075$	$\gamma=0.3$	$\rho_{\pi^*}=0.82$	$\varepsilon_w=3$


Մոդելը, որը բերվում է տարբերակային հավասարումների համակարգի, պարամետրերի նշված արժեքների դեպքում լուծվել է **MatLab** ծրագրային միջավայրում գործող **IRIS Toolbox**- ի միջոցով: Որպեսզի հնարավոր լինի դատողություններ անել աշխատավարձերի կոշտության ունեցած ազդեցության վերաբերյալ, նույն շոկի ազդեցությունը դիտարկվել է երկու հնարավոր դեպքերի համար, այն է՝ 1. կոշտ աշխատավարձեր՝  $\theta_w = 0.65$ , 2. ձկուն աշխատավարձեր՝  $\theta_w \approx 0$ , գրաֆիկների միջոցով պատկերվում է 1 % շոկի պարագայում մոդելի փոփոխականների դինամիկան, որը միարժեքորեն որոշվում է մոդելի հավասարումների և պարամետրերին տրված արժեքների միջոցով: Հոծ գծով պատկերվում է ձկուն ( $\theta_w \approx 0$ ), իսկ կետագծով՝ կոշտ աշխատավարձերով մոդելի փոփոխականների դինամիկան ( $\theta_w = 0.65$ ):

Քանի որ շոկի հետևանքով խախտված հավասարակշռության վերականգնումը երկարատև գործընթաց է և ընթանում է մի քանի փուլով, ապա կսահմանափակվենք միայն սկզբնական փուլը նկարագրելով՝ նպատակ ունենալով մեկնաբանել մոդելի գործողության մեխանիզմը և դրամավարկային քաղաքականության դերը հավասարակշռության վերականգնման գործընթացում:

1.1. Տնտեսության ներսում արտադրված ապրանքների գնաճի շոկ (գծանկար 1): Ներքին գների աճը բերում է ընդհանուր գների մակարդակի (ՄԳԲ) աճի (24): Արտադրության ոլորտում գների մակարդակի աճը կրճատում է իրական սահմանային ծախսերը (25), համաձայն Ֆիլիպսի կորի՝ գներն ապագայում անկման միտում են ունենում (22):

Գծանկար 1

**Ներքին արտադրության ապրանքների գնաճի շոկ**



Կենտրոնական բանկը (ԿԲ), գործելով դրամավարկային կանոնին համապատասխան և ունենալով ներքին արտադրության ապրանքների գների մակարդակի աճ, բարձրացնում է տոկոսադրույքը: Դրա հետևանքով սպառման մակարդակը կրճատվում է (11), իսկ ազգային արժույթը արժևորվում (14):

Զսպող դրամավարկային քաղաքականության շնորհիվ ազգային արժույթի արժևորումը, ինչպես նաև ընդհանուր գների մակարդակի աճը հանգեցնում են իրական փոխարժեքի արժևորման (15): Իրական փոխարժեքի արժևորումն իր հերթին հանգեցնում է արտաքին մրցունակության անկման՝ արտահանման ծավալները կրճատվում են: Նկատենք, որ կրճատվել էր նաև ներքին ապրանքների նկատմամբ հարաբերական պահանջարկը: Նշված գործոնների ազդեցությամբ կրճատվում է իրական ՀՆԱ-ն (12): Իրական ՀՆԱ-ի կրճատումը հանգեցնում է աշխատուժի պահանջարկի կրճատման, որից հետևում է արտադրության գործընթացում ներգրավված աշխատուժի ծավալի կտրուկ անկումը (13):

ԿԲ-ի կողմից տոկոսադրույքի բարձրացումն առաջացնում է ազգային արժույթի արժևորում, իսկ քանի որ համաձայն ենթադրության՝ անվանական փոխարժեքի փոփոխությունն անմիջապես չի փոխանցվում ներմուծված ապրանքների գներին, ապա կունենանք շեղում մեկ գնի օրենքից (16): Սա փոքր-ինչ մեղմացնում է ՀՆԱ-ի անկումը. այն ավելի քիչ է լինում, քան կլիներ, եթե մեկ գնի օրենքը պահպանվեր ( $\psi_i < 0$ ): Երբ մեկ գնի օրենքը պահպանվում է, ազգային արժույթի արժևորումը բերում է ներմուծման գների կրճատման՝ հանգեցնելով ներմուծման հանդեպ պահանջարկի աճի, ուստի նաև այլ հավասար պայմաններում ՀՆԱ-ի կրճատման: Սակայն մեկ գնի օրենքից շեղման դեպքում փոխարժեքի փոփոխությունն անմիջապես չի փոխանցվում ներմուծված ապրանքների գներին. տվյալ դեպքում դրանք որոշ ժամանակ կվաճառվեն ավելի բարձր գներով. ներքին ապրանքների մրցունակության և հետևաբար ՀՆԱ-ի անկում անմիջապես տեղի չի ունենա:

Արձանագրված շոկին ի պատասխան՝ ԿԲ-ի գործողությունների շնորհիվ գրանցված մեկ գնի օրենքից բացասական շեղումը, ինչպես նաև ներքին ֆիրմաների իրական սահմանային ծախսերի անկումը նվազեցնում են ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը (26): Սա նշանակում է, որ ԿԲ-ի դրամավարկային քաղաքականությունը օբյեկտիվ տնտեսական հիմքեր է ստեղծում ներմուծող ֆիրմաների կողմից գների իջեցման համար (23):

Աշխատուժի և սպառման միջև փոխարինման սահմանային նորմը կրճատվում է սպառման և աշխատաժամանակի կրճատման հետևանքով (21): Ճկուն աշխատավարձերի դեպքում պահպանվում է աշխատուժի և սպառման փոխարինման ներժամանակային պայմանը, այն է՝  $w_i - p_i = mrs_i$ , որից հետևում է, որ փոխարինման սահմանային նորմի կրճատումը հանգեցնում է իրական աշխատավարձերի կրճատման:

Մյուս կողմից, կոշտ աշխատավարձերով մոդելում աճում է աշխատավարձերի հավելադիրը, որը, համաձայն աշխատավարձերի նորքեյնսյան Ֆիլիպսի կորի, բերում է աշխատավարձերի մակարդակի կրճատման (17):

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Կոշտ աշխատավարձերով մոդելում աշխատավարձերը, առավել դանդաղ արձագանքելով շոկին, ավելի քիչ են նվազում<sup>2</sup>.  $w_t^{IABi} > w_t^{OI\alpha\theta Y}$  որից հետևում է, որ իրական սահմանային ծախսերը ևս քիչ են կրճատվում.  $w_t^{IABi} > w_t^{OI\alpha\theta Y} \Rightarrow mc_t^{IABi} > mc_t^{OI\alpha\theta Y}$ , այսինքն՝ ներքին արտադրության և ներմուծման գները հարաբերականորեն բարձր են մնում: Որպես հետևանք՝ դրամավարկային մարմինը առավել զսպոդական քաղաքականություն է վարում, և տոկոսադրույքները համեմատաբար ավելի շատ են բարձրացվում, որը հանգեցնում է սպառման ավելի մեծ կրճատման և ազգային արժույթի ավելի մեծ արժևորման: Սա էլ իր հերթին նշանակում է ՀՆԱ-ի ավելի մեծ կրճատում, որից բխում է գործազուրկների առավել մեծ թիվը: Ֆորմալ նկարագրված շղթան կլինի.


$$i_t^{IABi} > i_t^{OI\alpha\theta Y} \Rightarrow c_t^{IABi} < c_t^{OI\alpha\theta Y}, y_t^{IABi} < y_t^{OI\alpha\theta Y} \Rightarrow n_t^{IABi} < n_t^{OI\alpha\theta Y}$$

Ստացվեց, որ տնտեսական փոփոխությունների նկատմամբ աշխատավարձերի նվազ զգայունության հետևանքով ավելի շատ աշխատողներ են հայտնվում գործազուրկի կարգավիճակում: Աշխատավարձերի ճկունությունը թույլ է տալիս խուսափել այդ լրացուցիչ գործազրկությունից:

1.2. Աշխատավարձերի ինֆլյացիայի շոկ (գծանկար 2): Տվյալ դեպքում քննարկվում է միայն կոշտ աշխատավարձերով մոդելի փոփոխականների դինամիկան, քանի որ ճկուն աշխատավարձերով մոդելում աշխատավարձերն անմիջապես ճշգրտվում են գրանցված ցնցմանը համապատասխան, այսինքն՝ բոլոր փոփոխականները շոկի պահին, հետևաբար նաև հետագայում իրենց կայուն վիճակում են:

Գծանկար 2

Աշխատավարձերի ինֆլյացիայի շոկ



<sup>2</sup> Փոփոխականի վերևում նշվում է, թե տվյալ արժեքը որ մոդելին է վերաբերում՝ կոշտ, թե՞ ճկուն աշխատավարձերով:

Աշխատավարձերի աճը հանգեցնում է ներքին ֆիրմաների իրական սահմանային ծախսերի աճի (25): Համաձայն գնաճի Ֆիլիպսի կորի՝ ներքին գները սկսում են աճել: Ներքին գների աճը հանգեցնում է ընդհանուր գների մակարդակի (ՄԳԲ) աճի (24): ԿԲ-ն, արձագանքելով ներքին գների աճին, բարձրացնում է տոկոսադրույքը, որի հետևանքով սպառումը կրճատվում է (11), իսկ ազգային արժույթը արժևորվում (14):

Քանի որ, ազգային արժույթի անվանական արժևորումից բացի, աճում են նաև ընդհանուր գները, ապա իրական փոխարժեքը կսկսի արժևորվել ավելի մեծ չափով, քան անվանական փոխարժեքը (15): ԿԲ-ի կողմից տոկոսադրույքի բարձրացումը ազգային արժույթի արժևորման միջոցով առաջացնում է շեղում մեկ գնի օրենքից (16): Իրական փոխարժեքի արժևորման հետևանքով ընկնում է տնտեսության մրցունակությունը. արտահանումը նվազում է: Իրական փոխարժեքի արժևորումը և սպառման կրճատումը հանգեցնում են ամբողջական պահանջարկի կրճատման (12): Իրական փոխարժեքի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա փոքր-ինչ մեղմանում է՝ պայմանավորված մեկ գնի օրենքից շեղման առկայությամբ<sup>3</sup>: Թողարկման ծավալների կրճատումը բերում է աշխատուժի հանդեպ պահանջարկի նվազման, որը նշանակում է զբաղվածության կրճատում (13) և միջին աշխատավարձերի մակարդակի նվազում: Չնայած ազգային արժույթի արժևորմանը՝ ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը չեն կրճատվում՝ պատճառը ներքին ֆիրմաների բարձր իրական սահմանային ծախսերն են ( $mc_i$ -ն): Հետագայում մեծապես պայմանավորված  $mc_i$ -ի կրճատմամբ՝ ներմուծման գներն աստիճանաբար նվազում են (23): Մյուս կողմից, սպառման և աշխատաժամանակի կրճատման հետևանքով նվազում է փոխարինման սահմանային նորմը (21):


Շոկի պահին տնտեսությունում միջին աշխատավարձերի հավելադրի շեղումն իր կայուն վիճակից դրական է՝  $\mu_t^w > 0$ , այսինքն՝ աշխատաշուկայում այդ պահին առկա հավելադրի գերազանցում է մենաշնորհային միջավայրում հավելադրի ցանկալի մակարդակը: Սա նշանակում է, որ ապագայում տնային տնտեսությունները, հնարավորություն ստանալով ճշգրտելու աշխատավարձերի մա-կարդակը, հակված կլինեն սահմանելու ավելի ցածր աշխատավարձեր (17):

1.3. Արտերկրի սպառման կամ իրական ՀՆԱ-ի շոկ (զծանկար 3): Ռիսկերի բաշխման պայմանով ներքին տնտեսության սպառումը, կապված լինելով արտերկրի եկամուտների հետ, աճում է՝ պայմանավորված արտերկրի եկամուտների աճով: Արտերկրի սպառման կամ իրական ՀՆԱ-ի շոկը մեծացնում է արտահանման նկատմամբ պահանջարկը: Արտահանման աճն ըստ էության տնտեսության եկամուտների աճ է նշանակում, որը սպառման աճի հետ մեկտեղ բերում է ներքին արտադրության ապրանքների նկատմամբ պահանջարկի աճի: Դրա հետևանքով

<sup>3</sup> Մեկնաբանությունը՝ 1.1-ում:

աճում է իրական ՀՆԱ-ն: Սա իր հերթին մեծացնում է աշխատուժի հանդեպ պահանջարկը (13)՝ հանգեցնելով նաև աշխատավարձերի աճի:

Գծանկար 3



Մյուս կողմից, աճում է փոխարինման սահմանային նորմը՝ պայմանավորված սպառման և աշխատաժամանակի աճով (21):

Ճկուն աշխատավարձերով մոդելում  $w_t - p_t = mrs_t$ , ուստի փոխարինման սահմանային նորմի աճով պայմանավորված, աճում են նաև իրական սահմանային ծախսերը:

Կոշտ աշխատավարձերով մոդելում աշխատավարձերի հավելադրի բացասական լինելը ( $\mu_t^w < 0$ ) պայմանավորում է աշխատավարձերի աճ (17): Բարձր աշխատավարձերը հանգեցնում են բարձր իրական սահմանային ծախսերի (25), որն էլ բարձրացնում է ներքին գների մակարդակը: ԿԲ-ն արձանագրված գնաճին արձագանքում է տոկոսադրույքների բարձրացմամբ, հետևաբար սպառումը կրճատվում է (11), իսկ ազգային արժույթը արժևորվում (14): Բացի այդ, տոկոսադրույքի բարձրացումը արժևորում է նաև իրական փոխարժեքը (15): Իրական փոխարժեքի արժևորումը զսպում է սպառման և իրական ՀՆԱ-ի աճը: Ներմուծված ապրանքների գները ավելի թույլ են արձագանքում փոխարժեքի արժևորմանը, քանի որ աշխատավարձերի աճը հանգեցրել է ներքին ֆիրմաների, ուստի նաև ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերի աճի (26):

Փոխարժեքի արժևորումը և ներմուծման գների աճը բերում են շեղում մեկ գնի օրենքից (16): Իրական ՀՆԱ-ի աճն ավելի մեծ է լինում, քան կլիներ, եթե մեկ գնի օրենքը պահպանվեր (12):

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Կոշտ աշխատավարձերի պարագայում աշխատավարձերն ավելի քիչ են աճում  $w_t^{i a \beta i} < w_t^{O i a \theta Y}$ : Դա նշանակում է ներքին իրական սահմանային ծախսերի


$mc_t^{Ia\beta i} < mc_t^{O'a\delta Y}$ , հետևապես ներքին արտադրության և ներմուծված ապրանքների գների հարաբերականորեն ցածր մակարդակ: Ուստի ԿԲ-ն ավելի մեղմ քաղաքականություն է վարում՝

$$i_t^{Ia\beta i} < i_t^{O'a\delta Y} \Rightarrow c_t^{Ia\beta i} > c_t^{O'a\delta Y}, y_t^{Ia\beta i} > y_t^{O'a\delta Y} \Rightarrow n_t^{Ia\beta i} > n_t^{O'a\delta Y}:$$

Այսպիսով, հավասարակշռության վերականգնման գործընթացը կոշտ աշխատավարձերի պարագայում ուղեկցվում է ավելի բարձր սպառման և իրական ՀՆԱ-ի մակարդակով: Գործեց պահանջարկի օրենքը. ճկուն աշխատավարձերի դեպքում ավելի բարձր աշխատավարձերը հանգեցնում են ավելի ցածր զբաղվածության:

1.4. Տոկոսադրույքի շոկ (գծանկար 4): Տոկոսադրույքի դրական շոկը կրճատում է սպառումը (11) և արժևորում փոխարժեքը (14): Իրական փոխարժեքի արժևորումը կրճատում է արտաքին և ներքին մրցունակությունը. նվազում են արտահանման ծավալները և ներքին ապրանքների նկատմամբ հարաբերական պահանջարկը: Նշված փոփոխությունները իրական ՀՆԱ-ի վրա ազդում են նվազման ուղղությամբ: Արդյունքում ֆիրմաները կրճատում են աշխատուժի պահանջարկը (13), որից հետևում է, որ կրճատվում են զբաղվածությունը և աշխատավարձերի մակարդակը:

Գծանկար 4



Մյուս կողմից, նվազում է աշխատուժի և սպառման փոխարինման սահմանային նորմը, քանի որ կրճատվել են սպառումը և աշխատաժամանակը (21):

Դրական աշխատավարձերի հավելադիրը ( $\mu_i^w > 0$ ) բերում է աշխատավարձերի կրճատման (17): Աշխատավարձերի կրճատմամբ պայմանավորված՝ կրճատվում են իրական սահմանային ծախսերը (25), հետևաբար նաև ներքին գները (22):

Բացի այդ, փոխարժեքի արժևորման և ներքին իրական սահմանային ծախսերի կրճատման հետևանքով նվազում են ներմուծող ֆիրմաների իրական սահմանային ծախսերը (26), ուստի նաև ներմուծման գները (23): Փոխարժեքի արժևորումը բերում է մեկ գնի օրենքից բացասական շեղում, իսկ ներմուծման գների կրճատումը՝ դրական, սակայն արդյունքում ունենում ենք բացասական շեղում, քանի որ փոխար-

ժեքի արժևորումը բացարձակ արժեքով մեծ է ներմուծման գների կրճատումից  $|s_t| > |p_t^m|$  (16): Իրական ՀՆԱ-ի անկումը ավելի քիչ է լինում, քան կլիներ, եթե մեկ գնի օրենքը պահպանվեր:

Քանի որ ներմուծման և ներքին արտադրության ապրանքների գները նվազել են, ապա ԿԲ-ն իջեցնում է տոկոսադրույքները: Դրամավարկային քաղաքականության արդյունքը սպառման աճն է (11) և ազգային արժույթի արժեզրկումը (14): Հավասարակշռությունը սկսում է վերականգնվել ազգային արժույթի արժեզրկման և սպառման աճի միջոցով:

Կոշտ և ճկուն աշխատավարձերով մոդելների համեմատություն: Կոշտ աշխատավարձերի դեպքում աշխատավարձերը, հետևաբար նաև իրական սահմանային ծախսերը ավելի քիչ են նվազում՝  $w_t^{labr} > w_t^{Olabr} \Rightarrow mc_t^{labr} > mc_t^{Olabr}$ : Մա նշանակում է, որ կոշտ աշխատավարձերի դեպքում ներքին արտադրության և ներմուծված ապրանքների գները հարաբերականորեն բարձր են մնում, ուստի ԿԲ-ն ավելի զսպող քաղաքականություն է վարում՝

$$i_t^{labr} > i_t^{Olabr} \Rightarrow c_t^{labr} < c_t^{Olabr}, y_t^{labr} < y_t^{Olabr} \Rightarrow n_t^{labr} < n_t^{Olabr} :$$

Կոշտ աշխատավարձերով մոդելում ավելի քիչ գնանկման պարագայում տոկոսադրույքների ավելի բարձր լինելու հետևանքով հավասարակշռության վերականգնման գործընթացն ընթանում է ավելի ցածր սպառման, ՀՆԱ-ի և զբաղվածության մակարդակով, սակայն ավելի բարձր աշխատավարձերով:

Այսպիսով, դիտարկվեց տարբեր շուկերի ունեցած ազդեցությունը մոդելի փոփոխականների վրա կոշտ և ճկուն աշխատավարձերի պարագայում: Գծապատկերների օգնությամբ կատարվեցին երկու մոդելների համեմատություն և անցումային դինամիկայի նկարագրություն:

Փոփոխականների ստանդարտ շեղումների համեմատությունը (աղյուսակ 1) ամփոփ ներկայացնում և ավելի նկատելի է դարձնում երկու մոդելների տարբերությունները: Մասնավորապես, կոշտ աշխատավարձերով մոդելում աշխատավարձերի ստանդարտ շեղումը ավելի փոքր է, որը վկայում է այն մասին, որ միննույն արտաքին ազդակի դեպքում աշխատավարձերն ավելի քիչ են փոփոխվում: Մա, ըստ էության, այն առանցքային գործոնն է, որն էական տարբերությունների է հանգեցնում երկու մոդելների հավասարակշռության վերականգնման գործընթացներում:

Քանի որ փաստացի տնտեսությունում աշխատավարձերի կոշտությունը անհերքելի երևույթ է, ապա նման ենթադրությամբ ընդլայնված մոդելն առավել իրատեսական է և ավելի մեծ հավանականությամբ ունակ կլինի նկարագրելու տնտեսությունում ընթացող գործընթացները:



Կոշտ ( $\theta_w = 0.65$ ) և ձկուն ( $\theta_w \approx 0$ ) աշխատավարձերով  
 մոդելների փոփոխականների ստանդարտ շեղումներ տարբեր շուկերի դեպքում

$y_t$	0.20	0.31	0.05	0.07	0.09	0.14
$c_t$	0.15	0.24	0.04	0.06	0.09	0.13
$i_t$	0.09	0.13	0.02	0.01	0.13	0.15
$\omega_t$	0.60	0.47	0.17	0.03	0.39	0.05
$r_t$	0.07	0.10	0.02	0.01	0.17	0.16
$\pi_t$	0.13	0.17	0.03	0.01	0.06	0.02
$\pi_t^h$	0.19	0.25	0.04	0.02	0.07	0.03
$\pi_t^m$	0.03	0.05	0.01	0.01	0.04	0.03
$mc_t$	0.73	0.66	0.17	0.03	0.39	0.06
$w_t$	<b>0.46</b>	<b>0.21</b>	<b>0.14</b>	<b>0.02</b>	<b>0.31</b>	<b>0.04</b>
$s_t$	0.22	0.35	0.13	0.08	0.19	0.27
$\Delta s_t$	0.12	0.17	0.04	0.02	0.30	0.33
$q_t$	0.35	0.52	0.13	0.07	0.27	0.34

$\sigma$	$\varepsilon_t^{\pi^h} = 1$		$\varepsilon_t^{\pi^m} = 1$		$\varepsilon_t^i = 1$	
	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$	$\theta_w \approx 0$	$\theta_w = 0.65$
$\varphi_t^m$	0.17	0.17	0.03	0.01	0.30	0.25
$\varphi_t$	0.15	0.23	0.06	0.03	0.28	0.33
$mrs_t$	0.60	0.91	0.17	0.25	0.39	0.51
$\pi_t^w$	0.23	0.05	0.18	0.02	0.42	0.03
$\mu_t^w$	0.00	0.51	0.00	0.22	0.00	0.47
$n_t$	0.20	0.31	0.05	0.07	0.09	0.14

ОСОБЕННОСТИ ДИНАМИЧЕСКОЙ СТОХАСТИЧЕСКОЙ  
 МОДЕЛИ ОБЩЕГО РАВНОВЕСИЯ И ПЕРЕДАТОЧНЫЙ МЕХАНИЗМ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ  
 ПОЛИТИКИ

БАРСЕГЯН Г. В

Резюме

Изучение рынка труда дает возможность выявить особенности динамической стохастической модели общего равновесия. При рассмотрении динамического поведения указанной модели весьма важно учесть воздействие жесткой заработной платы на передаточный механизм денежно-кредитной политики, который изменяется именно в случае жесткой заработной платы.